



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«ՃՃ» ասպրիլի 2016թ.

№ 48-ԸԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 26-Ի N363, 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 14-Ի N290 ԵՎ  
2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N72-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 16-րդ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի N309-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1294-Ն որոշման N1 հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2016 թվականի ապրիլի 12-ի N101/101.1/1695-16 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2016 թվականի ապրիլի 20-ի N02.2/2197-16 գրությունները.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու և Շիրակի մարզերի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների ցուցակները հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2012 թվականի հունիսի 15-ի N124 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N363 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանի N1 հավելվածի 124-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

124	2ս-1209	30	Պայան Քնարիկ Խորենի	1956թ.	AH 0632120, տրված 22.07.2008թ., 016-ի կողմից	2	1
			Պայան Պիատրիսա Հակոբի	1982թ.	AE 0378205, տրված 14.10.1999թ., 016-ի կողմից		

2) հրամանի N5 հավելվածի 37-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

37	140	Քոթանջյան Թերեզա Աղասի	1946թ.	AC 0524518, տրված 29.12.1998թ., 052-ի կողմից	1	1
----	-----	------------------------	--------	---	---	---

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շահառու ճանաչված՝ ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները չբարելավված անձանց (ընտանիքների) միասնական ցուցակը հաստատելու մասին» N290 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հրամանի հավելվածի 150-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

150	2ս-1209	30	Պայյան Քնարիկ Խորենի	1956թ.	AH 0632120, տրված 22.07.2008թ., 016-ի կողմից	2	1	26.11.2013թ. N363
			Պայյան Պիատրիսա Հակոբի	1982թ.	AE 0378205, տրված 14.10.1999թ., 016-ի կողմից			

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2016 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 26-ի N363 և 2014 թվականի սեպտեմբերի 3-ի N233 հրամաններում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում Սպիտակ քաղաքում և Ախուրյան համայնքում շահառու ճանաչված անձանց (ընտանիքների) միասնական ցուցակները հաստատելու մասին» N72-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետից «, 29-րդ» բառերը հանել.

2) հրամանի N1 հավելվածը 48-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 49-րդ կետով.

49	73	Սահակյան Ռոբերտ Ալբերտի	1961թ.	AH 0418954, տրված 27.08.2007թ., 052-ի կողմից	1	1	26.11.2013թ., N363
----	----	----------------------------	--------	---	---	---	-----------------------

Նախարար՝



Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

«22» սեպտեմբեր 2016թ.  
ք. Երևան